

եւ գերագոյն, կատարեալ իշխանութիւնն եւ պետութիւն ի վերայ Ընդհանրականի Կաթողիկէ Եկեղեցւոյ: Հաւատամ եւ գվեհապետն նմին Սրբոյ Եկեղեցւոյ, Աթոռակալ եւ Փոխանորդ սրբոց գլխաւոր Առաքելոցն Պետրոսի եւ Պողոսի, կապող եւ արձակող ի յերկինս եւ ի յերկրի: Ընդունիմ եւ պատուեմ եւ հետեւիմ հնազանդեցելոցն յԸնդհանրականի, Մեծի եւ Առաքելական Սուրբ Եկեղեցւոյն Հոռմայու, ի կեանս յայս եւ ի հանդերձեալն: Հերքեմ եւ նզովեմ զընդդիմական եւ զհակառակողսն նմին Մեծի Սրբոյ եւ Առաքելական Եկեղեցւոյն Հոռմայու ի կեանս յայս եւ ի հանդերձեալն:

Գրեցաւ դաւանութիւնս ի թուին Հայոց Ռէժիմ Օգոստոս մէկն: Վասն որոյ ինձ Յակոբայ ամենայն Հայոց Կաթողիկոսիս ընդունելի է, որ եւ ձեռամբ իմով ձեռնագրեցի, առ ի հաստատութիւն գրոյս յայսմիկ:

Io Francesco Lestringant della Compagnia di Gesù testimonio, Io Francesco Guilly della Compagnia di Gesù testimonio. Ita est Fr. Gaspar Gasparrinus Episcopus Cyzicenus, suffraganeus et Vicarius Apostolicus Constantinopolis. *Քրիստոսի ծառայ Յակոբ Կաթողիկոս յամենայն Հայոց. եւ Սողոմոն Լէոնեան լսեցի աւանջօքս զդաւանութիւն Տեառն Յակոբայ Կաթողիկոսին, որ եւ ձեռնագրեաց ձեռամբն. վասն որոյ վկայեմ զի ձեռամբ իմով գրեցի. Salamon di Leon. եւ Թադէոս երէցս Համադափեան կայի առաջի զոր իմով Թարգ-*